

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 157

Շնորհաց վարդապետութիւնների նկատմամբ եղած աստաճաբանական վիճաբանութիւնները նոր բաներ չեն, քանի որ դրանք եկեղեցու պատմութեան մէջ սահմանել եւ քննարկել են: Հետեւեալն է 5րդ դարուայ Պեղագեան վիճաբանութեան մի ամփոփումը:

Պեղագիտոս – Պեղագիտոսը ծնեց Բրիտանիայում 354 Ք.Յ. թուականին: Յետագայում նա մի վանական դարձաւ: Նա նեղացած էր Օգոստինոսի մի աղօթքներից, թէ՛ «Շնորհէ այդ ինչ որ Դու հրամայում ես, եւ հրամայէ այդ ինչ որ Դու ցանկանում ես»: Պեղագիտոսը հաւատացած էր որ մարդը կարող է անելու այդ ինչ որ Աստուած հրամայել է, եւ կարիքը չունի Աստծուն որ այդ կարելի դարձնի իր համար: Պեղագիտոսը ուսուցանեց որ մարդը բարի էր ստեղծել, ազատ կամքով՝ ունենալով հաւասար կարողութիւնը ընտրելու թէ բարին կամ թէ չարը: Երբ Ադամը մեղանչեց, նա մեղանչեց ըստ իր ազատ կամքը: Ադամի մեղքը չպղծեց նրա բնութիւնը, ու չաւերեց նրա բարին ընտրելու կարողութիւնը: Ադամը մահկանացու էր ստեղծել, ուրեմն նրա բնական մահը իր մեղքի հետեւանքը չէր, քանի որ նա պիտի մեռնէր անկախ թէ ինչ անէր:

Պեղագիտոսը չհամարեց Ադամին որպէս մարդկութեան գլուխը կամ ներկայացուցիչը, ուստի նրա մեղքը չունեցաւ ոչ մի հետեւանք մարդկային ցեղի համար: Ադամի սերունդը չեն ժառանգում նրա յանցանքը, ոչ էլ ծնունդ են մեղաւոր բնութեամբ: Ադամի մեղքը միայն մնաց որպէս մի վատ օրինակ իր սերունդի համար: Պեղագիտոսը հաստատեց թէ բոլոր մարդ արարածներ ծնունդ են Ադամի նման նախքան նրա մեղանչումը՝ անմեղ եւ բնութեամբ անպղծած, ունենալով ազատ կամք: Մարդը կարող է մեղքից խուսափել (հեռու մնալ) եւ անել այդ ինչ որ ուղիղ է: Մեղքը տկարացնում է կամքը եւ տանում է դէպի վատ սովորութիւններ, բայց այդ բարոյական անկարողութիւն չի պատճառում: Պեղագիտոսը պնդեց թէ մարդիկ կարող են անմեղ ու կատարելալ լինել՝ եւ ոմանք էին: Նա ուսուցանեց թէ Աստուած նաեւ մարդուն շնորհք պարգեւեց Նրա օրէնքի եւ Աւետիսի միջոցով՝ մատակարարելով մարդուն հրահանգ եւ լուսաւորութիւն թէ ինչն է ճիշտ ու բարի՝ Քրիստոսը լինելով դրանց գլխաւոր օրինակը: Թէպէտ Աստծոյ շնորհքը օգնում է մարդուն՝ բարին անելը դարձնելով աւելի հեշտ նրա համար, սակայն այդ մի հարկաւորութիւն չի: Պեղագիտոսի համար, վերածնութիւնը մարդու բնութեան փոփոխութիւնը չէր, այլ մեղքերի ներումը, եւ ճշմարտութեամբ եղած մտքի ու կամքի լուսաւորութիւնը: Ընտրութեան վերաբերեալ, Պեղագիտոսը պնդեց որ Աստուած ընտրեց նրանց որոնց Նա նախագիտէր որ պիտի լինէին սուրբ եւ անմեղ՝ ըստ նրանց ազատ կամքը:

Օգոստինոս – Օգոստինոսը ծնեց Հիւսիսային Աֆրիկայում նաեւ 354 Ք.Յ. թուականին: Նա Քրիստոնէայ դարձաւ 386ին, եւ յետագայում ձեռնադրեց որպէս քահանայ, եւ ապա որպէս եպիսկոպոս: Օգոստինոսը ուսուցանեց թէ մարդը ստեղծել էր Աստծուց բարի եւ ուղիղ: Ադամը ստեղծել էր մեղանչելու կարողութեամբ եւ ոչ մեղանչելու կարողութեամբ: Մարդը չէր ստեղծել մի ամփոփոխական բնութեամբ, իսկ այդ ինչ որ կարելի էր փոխելու: Ադամը ունէր ազատ կամք, բայց ոչ այդ իմաստով որ նա ունէր հաւասար կարողութիւնը ընտրելու բարին կամ չարը. այլ Ադամը նախնականօրէն ստեղծել էր Աստծոյ եւ ուղղարարութեան հանդէպ եղած դրական հակումով: Օգոստինոսը նաեւ հաստատեց որ Ադամը ստեղծել էր մեռնելու կարողութեամբ եւ ոչ մեռնելու կարողութեամբ: Երբ Ադամը մեղանչեց նա մեռաւ՝ հոգեւորապէս եւ բնականապէս:

Օգոստինոսը համարեց Ադամին որպէս մարդկային ցեղի ներկայացուցիչը: Նրա մեղքը միայն մի անձնական մեղք չէր, այլ այդ ինչ որ ունեցաւ սարսափելի հետեւանքներ իր սերունդի համար: Մարդ արարածներ ժառանգում են Ադամի յանցանքն ու պիղծ բնութիւնը, նրանց կամքերն ու մտքերը լինելով մեղքին հակամէտ ու գերի: Մարդու բնութիւնը դարձաւ մի բարոյական անկարողութեան բնոյթ: Թէ Ադամի մեղքը եւ թէ Քրիստոսի հնազանդութիւնը փոխանորդական արարքներ էին: Օգոստինոսը հաստատեց թէ նոյնիսկ անկումից յետոյ մարդը ունի իր ազատ կամքը՝ այսինքն կարողութիւնը ընտրելու այդ ինչ որ նա ցանկանում է որեւէ պարագայում, բայց նա ձեռքից է տւել իր իսկ ազատութիւնը, եւ լինելով մեղքի գերութեան տակ նա միշտ ցանկանում եւ ընտրում է չարը:

Ուստի, իր պղծած վիճակից փրկելու համար, մարդու բնութիւնը կամ սիրտը պիտի փոխի, եւ այս միայն Աստծոյ շնորհալի գործն է՝ Նրա վերածնութեան գործը: Երբ Աստուած այսպէս ազատի մեղաւորի սիրտը, նա կ'ցանկանայ եւ կ'գայ Քրիստոսին: Նախասահմանութեան վերաբերեալ, Օգոստինոսը գրեց թէ ընտրեալները նրանք չեն որոնք «ընտրել են որովհետեւ նրանք հաւատացին, այլ ընտրել են որպէսզի նրանք հաւատան»: Եւ այս ընտրութիւնը հիմնաւորած էր Աստծոյ բարի հաճութեան վրայ:

Պեղագեան վիճաբանութիւնը – Եկեղեցական խորհուրդները դատապարտեցին Պեղագիտոսի վարդապետութիւնները որպէս հերետիկոսութիւն՝ Աֆրիկայի Կարթագենում (411, 416 եւ 418). նաեւ երրորդ եկեղեցական ընդհանրական ժողովում՝ Եփեսոսում (431): Օգոստինոսի վարդապետութիւնները հռչակեցին որպէս աստաճառչային, եւ հաստատեցին որպէս Եկեղեցու վարդապետութիւնները: